ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2011 թվականի N 639-Ա

ք. Հրազդան

1996 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, 1996 թվականին ծնված պատանիների և ավագ տարիքի անձանց զորակոչային տեղամասերում կցագրման աշխատանքներ կազմակերպելու և անցկացնելու համար

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 1996 թվականին ծնված պատանիների և ավագ տարիքի անձանց կցագրումը զորակոչային տեղամասում անցկացնել 2012 թվականի ընթացքում:

2. Կցագրում անցկացնել Նաիրիի տարածքային զինվորական կոմիսարիատում:

3. Կցագրում անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝ բժիշկ մասնագետներ.

թերապևտ	Վ. Սարգսյան
վիրաբույժ	Ռ. Մկրտչյան
ակնաբույժ	Լ. Ավետիսյան
քիթ-կոկորդ-ականջ	Ա. Խալաթյան
նյարդաբան	Հ. Կարապետյան
ատամնաբույժ	Մ. Միրզոյան
հոգեբույժ	Ա. Մանուկյան
մաշկավեներաբան	Ա. Կառավարիչյան
բուժքույր	Ս. Օհանջանյան

4. Բժշկական քննություններ անցկացնող մասնագետների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման 1-ին կետի պահանջների համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բժշկական կենտրոններում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների բժշկական փորձաքննություններն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման 3-րդ կետի դրույթների:

6. <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Վերանյանին՝

Ժամանակին կազմակերպել այն պատանիների բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման:

Ապահովել հանձնաժողովին անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

7. Կցագրումն անցկացնող հանձնաժողովի նախագահին՝ կցագրման ավարտից հետո վերլուծել բոլոր հիվանդ ճանաչված պատանիների հիվանդության պատճառները, սահմանել խիստ հսկողություն ժամանակին բուժման ենթարկելու համար:

8. Առաջարկել համայնքների ղեկավարներին, հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

Համաձայն զինվորական կոմիսարիատի ժամանակացույցի, ապահովել պատանիների պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

9. Սույն որոշման աշխատանքների կազմակերպումը և կատարումը դնել Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյանի վրա:

10. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս.Հակոբյանի վրա:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ